Հ Ր Ա Մ Ա Ն N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«19» ՀՈՒՆՎԱՐԻ 2015 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԳԱԼՈՒՍՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Ա. Օսիկյանի միջնորդությունը, ինչպես նաև անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը և **ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով**.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, այն է՝ հիմնարկի բնակելի գոտի մուտք գործելիս իր հետ որպես արգելված իր, 0,5 լիտր տարողությամբ տարայով գինի տեղափոխելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կտրսեր մասնագետ /էլեկտրիկ/ Գալուստ Պետրոսի Մանուկյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2015 թվականի հունվարի 20-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ